



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13  
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ

ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 5 ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ  
20.12..2023թ.

Համայնքի ավագանու նիստին ներկա են ավագանու 26 անդամները:

Բացակայում է ավագանու անդամ Գարիկ Ղամբարյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

*Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Վ.Զիլինգարյանը, խորհրդական Ա.Խլղաթյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Գ.Աֆյանը, Բ. Բալբաբյանը, Ս.Բալբաբյանը, Ա.Զաքարյանը, վարչական ղեկավարներ Դ.Իվանյանը, Հ. Անդրեսյանը:*

**Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար\_Հ. Շահգալոյանը:**

Նախքան նիստի օրակարգային նախագծի քվեարկելը աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը հայտարարեց, որ Չարենցավան համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից ներկայացված նախագիծը՝ «Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 14-ի «Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային եղանակով օտարելու կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 36 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» խմբակցության առաջարկով հանվում է օրակարգից:

**Իրավասու** հանձնաժողովի նիստի ժամանակ առաջարկվել է ավելացնել նախագիծ՝ Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

Ավագանու անդամ Նորիկ Վարդանյանը հարցադրում արեց Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի հաստատման նախագծի վերաբերյալ, մասնավորապես ֆոնդային բյուջեի վերաբերյալ:

Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Գայանե Աֆյանը տվեց պարզաբանում, նշելով որ բոլոր հետաքրքրող հարցերը կարող են ներկայացնել գրավոր տարբերակով:

### Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Եթե առարկություններ չկան, Ձեր հաստատմանն եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի թիվ 5 հերթական նիստի օրակարգը փոփոխված տարբերակով:

- 1) Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
- 2) Չարենցավան համայնքում տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
- 3) Չարենցավանի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:
- 4) Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2024 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
- 5) Չարենցավան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն դիմելու մասին:
- 6) Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2024 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
- 7) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին:
- 8) Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
- 9) Չարենցավան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
- 10) Չարենցավան համայնքի 2024 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:
- 11) Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 18-ի «Չարենցավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 9-Ն որոշման հավելված N 2-ը ուժը կորցրած ճանաչելու և Չարենցավան համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին:
- 12) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում տեղական տուրք և տեղական վճար վճարողների հաշվառման և գրանցամատյանների վարման կարգը հաստատելու մասին:
- 13) Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդատեսքի դասին դասվող կառուցապատման իրավունքով տրամադրվող հողատարածքների տրամադրման առաջարկությանը հավանություն տալու մասին:
- 14) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին: